Վարշավան՝ ջրհեղեղի վտանգի առաջ

Օձերի կծածներ...

Բնապահպանություն

Մարս 500.
մեկնարկը տրված է

ISSN 1829-149X
10021
9 771829 149003

ով իրազեկված է, նա զինված է

արտակարգ թերթ

N 21 (342) 11.6.2010 - 17.6.2010 www.emergency.am

Շվեյցարական «Արձագանքը» Հայաստանում

Այս շաբաթ Հայաստանում էին Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության հումանիտար օգնության Եվրոպայի եւ Միջերկրական տարածաշրջանի բաժնի Հարավային Կովկասի ծրագրի պատասխանատու Մարտինա Ռումինգը եւ Հարավային Կովկասում տարածաշրջանային գրասենյակի փոխտնօրեն Սիմոն Չուրը: 2005 թվականից Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության կողմից Հայաստանում իրականացվում է «Արձագանք» ծրագիրը, որի ընթացքում ԱԻՆ ՀՓԾ հրշեջ-փրկարարական ջոկատներին տրամադրվել է փրկարարական գույք եւ տեխնիկա, ուսումնավարժություններ անցկացնելու նպատակով մշակվել է նոր մեթոդոլոգիա: Շվեյցարացի մասնագետները հանդիպեցին Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանին՝ իրականացված ծրագրերի արդյունավետությունն ու հետագա համագործակցության հետ կապված հարցերը քննարկելու համար: Այնուհետեւ նրանք մեկնեցին Գյումրի, ուր կազմակերպվել էր հերթական ուսումնավարժանքը:

«Արձագանք» ծրագրի շրջանակներում տարբեր սցենարներով հանրապետության բոլոր մարզերում անցկացվել են մի շարք ուսումնավարժություններ: Շվեյցարական կողմի առաջարկով, ստացված գիտելիքներն ու ներդրված նոր մեթոդներն ու տեխնիկան գործնականում արդյունավետ կիրառելու նպատակով Շիրակի մարզային փրկարարական վարչությունում հունիսի 8-ից 9-ն անցկացվեց «Հրդեհաշիջում եւ տուժածի տեղափոխում վտանգավոր գոտուց անվտանգ գոտի» թեմայով ուսումնավարժանք: Մեթոդական օգնություն ցուցաբերելու եւ վարժանքը ղեկավարելու նպատակով Շիրակի մարզ էին գործուղվել Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի փրկարարական ֆակուլտետի ներկայացուցիչներ: Ուսումնավարժանքի սցենարը գիտեր միայն ղեկավարը, մյուսները պետք է կողմնորոշվեին տեղում: Ընտրվել էր 4-րդ աստիճանի վթարային քառահարկ շինություն:

Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, օպերատիվ բաժնի պետ Մարտին Մկոյանը ներկայացնում է, թե ինչպես է ղեկավարում ուսումնավարժանքը.

- Ժամը 12:08-ին սկսվել է: Նշում եմ, թե ինչ հարցեր բնարկվեցին վարժանքի ընթացքում: Ինչպես կատարվեցին գործողությունները, ինչպիսի թերություններ կային, եւ՝ թե ինչը լավ կատարվեց: Այդ բոլոր կետերը վարժանքի ընթացքի վերաբերյալ նշվում են մեզ մոտ եւ ներկայացվում ղեկավարությանը:

Խմբերի ժամանման պահից գործի են անցնում անվտանգության աշխատակիցները, որոնք հետեւում ու գնահատում են հրշեջ փրկարարների գործողությունների անվտանգությունը: Կոպիտ սխալներ նկատելու դեպքում նրանք իրավունք ունեն դադարեցնելու գործողությունները՝ մինչեւ սխալների ուղղումն ու անվտանգության ապահովումը:

Ուսումնավարժանքի գործնական մասի ավարտից հետո անվտանգության խնբի ղեկավարը տալիս է իր գնահատականը:

- Անվտանգության տեսանկյունից թերություններ չեն գրանցվել: Եթե գրանցվեր, մեր կողմից կտրվեր STOP ազդանշանը: Քանի որ մեր կողմից նման ուսումնավարժությունները եւ՛ ոլանային, եւ՛ ոչ ոլանային են անցկացվում, շատ մեծ ուշադրություն ենք դարձնում մասնակիցների, անձնակազմի, անվտանգության հետ կապված խնդիրներին: Այսօր նման դեպքեր չեն գրանցվել, եւ աշխատանքները կատարվել են սահմանված նորմերի համաձայնախան, - ներկայացրեց Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ Կարեն Եղշատյանը:

Գործնական մասի ավարտից հետո ուսումնավարժանքի մասնակիցները վերլուծեցին բացթողումները եւ քննարկեցին թերությունները: Ապա շվեյցարացի հյուրերը ծանոթացան Շիրակի մարզի Ազատան, Ախուրյան գյուղերի դպրոցականների հետ: Տեղի դպրոցներում անցկացված «Հրշեջները համայքներում» ծրագրի շրջանակներում՝ աղետի գոտում մեծացած այս երեխաները հասցրել էին բավական գիտելիքներ ձեռք բերել աղետների տեսակների, առաջին բուժօգնություն ցուցաբերելու վերաբերյալ: Շվեյցարացի հյուրերը տպավորված էին ոչ միայն նրանց պատրաստվածությամբ, այլեւ՝ Շիրակի մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարների:

Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության (ՇԶՀ) Հարավային Կովկասում տարածաշրջանային գրասենյակի փոխտնօրեն Սիմոն Չուրն ասաց.

- Շատ հաճելի էր տեսնել, որ մեր հայ գործընկերները դաշտային վարժանքներ անցկացնելու բավական զարգացած հմտություններ ունեն: Այս վարժանքը հաջողված էր, եւ պետք է ասեմ, որ ծրագիրը շուտով ավարտելու ենք, այսպես կոչված բժշկական բաղադրիչով, որը ենթադրում է դեպքի վայրում առաջին օգնության ցուցաբերման ուսուցում: Այն կամբողջացնի արագ արձագանման գիտելիքների փոխանցման այս ծրագիրը:

Ուսումնավարժանքը հնարավորություն տվեց գնահատելու մարզային մակարդակներում նոր մեթոդով վարժանքներ անցկացնելու գիտելիքներն ու ունակությունները եւ հրշեջ-փրկարարների գիտելիքների կիրառման արդյունավետությունը: Ստացված գնահատականները բարձր էին. նախորդ տարիների համեմատությամբ տարբերությունն ակնհայտ է, ինչը զարգացման նոր հեռանկարային ծրագրերի իրականացման ծանրակշիռ առիթ է:

«Արտակարգ ալիք» հեռուստահաղորդում

- Պերմի «կաղ նժույգի» հրդեհի քննության հետքերով. մարդկանց սպանում է առաջին հերթին ծուխը: Ինչպե՞ս պաշտպանվել ծխից. խորհուրդ են տալիս փորձագետները:
- Որ կարկուտը ծեծած տեղը չծեծի. Արտակարգ իրավիճակների նախարարը հակակարկտային ծառայությունում:
- «Մաքուր հայրենիք» ծրագրի շրջանակներում. մեր փրկարարներն ամենուր էին:
- Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության ղեկավար աշխատակիցները Երեւանում եւ Գյումրիում:

Այս եւ այլ ուշագրավ թեմաների մասին՝ ուրբաթ, հունիսի 11-ին, 23:50-ին՝ Շանթի եթերում: Կրկնությունը՝ շաբաթ, 10:55-ին եւ կիրակի, 10:30-ին:

«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպը» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ»՝ բնակելի, առեւտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ✆ 56-69-22, 56-69-33:

քրոնիկոն

Հայաստանի փրկարար ծառայություն զանգահարեք

1-01, 1-12

Ուժեղ քամի

Հունիսի 2-ին, ժամը 23.00-ի սահմաններում Շիրակի մարզում գրանցված ուժեղ քամու հետեւանքով վնասվել են Հովունի, Վահրամաբերդ, Կապս, Մարմաշեն, Կարմրաքար, Քեթի, Հացիկ, Փոքրաշեն գյուղերի մի շարք բնակելի տների եւ օժանդակ շինությունների տանիքներ:

Ստեղծվել է հանձնաժողով՝ վնասի չափերը ճշտելու նպատակով:

***

Ուժեղ քամիներ են գրանցվել նաեւ Արագածոտնի մարզում:

Մասնավորապես՝ Աշտարակի Երեւանյան 1 հասցեից ահազանգ է ստացվել, որ հունիսի 2-ին, ժամը 23.00-ից 24.00-ը մոլեգնած ուժեղ քամու հետեւանքով «Արթուր-1» ՍՊԸ-ին հարակից կաթսայատան ծխնելույզը շրջվել ու ընկել է ընկերության վարչական շենքի տանիքին, ինչի հետեւանքով քանդվել են շենքի եւ կից շինության տանիքները՝ 30 քմ ընդհանուր մակերեսով:

Հունիսի 3-ին, ժամը 00.10-ի սահմաններում ուժեղ քամուց վնասվել է նաեւ մարզի՝ Նորաշեն, Գեղադիր եւ Ջորագլուխ գյուղերի բնակելի տների՝ ընդհանուր թվով 11 տան տանիք:

Վնասի չափերը ճշտելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով:

Քամին վնասել է տանիքը

Հունիսի 7-ին, ժամը 17.16-ին ահազանգ է ստացվել, որ ուժեղ քամու հետեւանքով Երեւանի Ագաթանգեղոսի փողոցում գտնվող «Սպարտակ» մարզական համալիրի տանիքի երկաթյա թիթեղները պոկվել են, կախվել տանիքից, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Փրկարարների ուժերով տանիքից ապամոնտաժվել է մոտ 45 քմ մակերեսով թիթեղ:

Հողաշերտի փլուզում

Հունիսի 3-ին, ժամը 15.05-ին ահազանգ է ստացվել, որ Գեղարքունիքի մարզում՝ Գավառի «Արծվաքար» թաղամասում, կոյուղաջրերի հորան փորելու աշխատանքներ իրականացնելու ժամանակ տեղի է ունեցել հողաշերտի ինքնափլուզում, ինչի հետեւանքով մեկ աշխատակից մնացել է հողի տակ, իսկ երկրորդը՝ մինչեւ կրծքավանդակը ծածկվել հողով:

Դեպքի վայր են մեկնել մեկ մարտական հաշվարկ եւ մարզային փրկարարական վարչության հերթապահ խումբը:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը՝ 1981 թ. ծնված Ռաֆիկ Մանասյանը քաղաքացիների օգնությամբ դուրս է բերվել հորանից:

Փրկարարների կողմից իրականացված որոնողական աշխատանքների արդյունքում ժամը 16.40-ին հորանում հայտնաբերվել է 1960 թ. ծնված Կամո Սահակյանի դին:

Ժամը 17.40-ին փրկարարների ուժերով դին դուրս է բերվել հորանից:

Ճիշտ ժամին, ճիշտ վայրում

Հունիսի 6-ին, ժամը 16.15-ին Ստեփանավանի հրշեջ փրկարարական ջոկատի ավագ հրշեջ Ատոմ Ջոհրաբյանից ահազանգ է ստացվել, որ Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 128-րդ կմ-ում ինքն ականատես է եղել ճանապարհատրանսպորտային պատահարի, կան տուժածներ եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում՝ «Միթսուբիշի» մակնիշի HEN 088 պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ շրջվել:

Մինչ փրկարարների դեպքի վայր հասնելը՝ Ա. Ջոհրաբյանը, ներգրավելով տեղի ուժերը, ավտոմեքենայից դուրս է բերել ուղեւորներ, Երեւանի բնակիչներ՝ 1989 թ. ծնված Էլեն Շահնազարյանին, 1989 թ. ծնված Վահե Կիրակոսյանին, 1991 թ. ծնված Աիդա եւ 1988 թ. ծնված Միհրան Համբարձումյաններին ու հանձնել շտապօգնության բրիգադին: Վ. Կիրակոսյանը եւ Է. Շահնազարյանը տեղափոխվել են Եղեգնաձորի հիվանդանոց: Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը միջին ծանրության է: Իսկ Վայքի հիվանդանոց տեղափոխված Համբարձումյանների վիճակը, ըստ բժիշկների, գնահատվում է բավարար:

Փրկարարների ուժերով ավտոմեքենան դուրս է բերվել ճանապարհի երթեւեկելի հատված եւ հանձնվել ճանապարհային ոստիկանության աշխատակիցներին:

Ընկել է ձորը

Հունիսի 7-ին, ժամը 01.13-ին շտապօգնության ծառայությունից ահազանգ է ստացվել, որ Հրազդանի կիրճում՝ Թումանյանի անվան զբոսայգուն հարակից տարածքում, քաղաքացի է ընկել ձորը, եւ նրան դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Տեղում պարզվել է, որ մինչ փրկարարների դեպքի վայր հասնելը՝ թեթեւ մարմնական վնասվածքներ ստացած 48-ամյա Սերգեյ Հարությունյանը ոստիկանության աշխատակիցների կողմից դուրս է բերվել ձորակից եւ հանձնվել շտապօգնության բրիգադին:

Ջորում դի է հայտնաբերվել

Հունիսի 7-ին, ժամը 20.38-ին շտապօգնության ծառայությունից ահազանգ է ստացվել, որ Կոտայքի մարզում՝ Ջորաղբյուրի ամառանոցների տարածքում, ձորի մեջ տղամարդու դի է հայտնաբերվել եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Փրկարարների ուժերով ձորից դուրս է բերվել Երեւանի Մոլդովական 54/55 հասցեի բնակիչ, 1932 թ. ծնված Եղիշ Ղուլյանի դին:

Մեքենաները թաղվել են ավազուտներում

Հունիսի 8-ին, ժամը 18.58-ին ահազանգ է ստացվել, որ երկու մեքենա են թաղվել Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասին հարակից լճափնյա տարածքի ավազուտներում, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր մեկնած՝ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության փրկարարների ուժերով ավազուտներից դուրս են բերվել Ի. Աղեկյանին պատկանող «ՈՒԱԶ-469» մակնիշի 31 LO 201 եւ Ծ. Խաչատրյանին պատկանող «ԳԱԶ-24» մակնիշի 29 LS 343 պետհամարանիշների ավտոմեքենաները:

Դեղորայքային թունավորում

Նույն օրը Երեւանի «1-03» ծառայությունից ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 14.09-ին դեղորայքային թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Վաղարշյան 15բ/24 հասցեի բնակչուհի, 1976 թ. ծնված Դ. Առաքելյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը գնահատվում է բավարար:

Կարիճի խայթոց

Նույն օրը Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 18.10-ին կարիճի խայթոցից թունավորումով Թալին քաղաքի հիվանդանոց է տեղափոխվել Բարոժ գյուղի բնակիչ, 1957 թ. ծնված Աֆո Օզմանյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը գնահատվում է բավարար:

Կախվել է տանիքում

Նույն օրը, ժամը 18.30-ին Ստեփանավան քաղաքի Գ. Նժդեհի 3/35 հասցեի բնակիչ Ա. Մինասյանից ստացված ահազանգի համաձայն՝ իր պապը՝ նույն հասցեի բնակիչ, 72-ամյա Իգոր Մինասյանը, շենքի տանիքում կախվելու միջոցով ինքնասպան է եղել, եւ դին իջեցնելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Ժամը 18.31-ին դեպքի վայր են մեկնել Լոռու մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը եւ օպերատիվ խումբը:

Ժամը 20.10-ին փրկարարների կողմից Ի. Մինասյանի դին իջեցվել է եւ հանձնվել ոստիկանության աշխատակիցներին:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 58 դեպք:

Հրդեհ տանիքում

Հունիսի 4-ին, ժամը 12.10-ին ահազանգ է ստացվել, որ

>>>

միջազգային լուրեր

Վարշավան՝ ջրհեղեղի վտանգի առաջ

Լեհաստանի գետերում ջրի մակարդակի բարձրացումը սպառնում է հազարավոր բնակիչների տներին: Մասնավորապես՝ ջուրը կրկին բարձրանում է Վիսլայում՝ սպառնալով Լեհաստանի մայրաքաղաքի որոշ շրջանների:

Վարշավայի քաղաքային իշխանությունները կրկին որոշում են ընդունել փակել մի շարք դպրոցներ ու մանկապարտեզներ: Փակ են նաեւ մայրաքաղաքի որոշ ավտոմայրուղիներ: Օդերեւութաբանների տվյալներով՝ Վիսլայի ջրի մակարդակը հնարավոր է բարձրանա մինչեւ 8 մետր: Համապատասխան ծառայություններն իրականացնում են ջրապատնեշների ամրացման աշխատանքներ:

Հիշեցնենք, որ ջրհեղեղի հետեւանքով Լեհաստանում արդեն զոհվել է երկու տասնյակից ավելի մարդ:

Հսկայական հրդեհ Բանգլադեշում

Հունիսի 3-ին ուժգին հրդեհ է բռնկվել Բանգլադեշի մայրաքաղաք Դաքայում: Կրակը մոլեգնել է մի քանի ժամ եւ ոչնչացրել տասնյակ բազմահարկ բնակելի շենքեր՝ ներսում թողնելով հարյուրավոր մարդկանց: Վերջին տվյալներով՝ կրակի զոհ է դարձել 108 մարդ: Զոհերի թիվը դեռ կարող է աճել, քանի որ հիվանդանոց տեղափոխված ավելի քան 150 տուժածներից շատերը ծանր վիճակում են:

Հրդեհը բռնկվել է քաղաքի հին թաղամասերից մեկում էլեկտրական տրանսֆորմատորի պայթյունի հետեւանքով եւ արագորեն տարածվել է բնակելի եւ գրասենյակային շենքերի վրա:

Շենքերից մեկի տանիքին այդ պահին հարսանիք էին անում: Ըստ հրշեջների՝ դրանով է պայմանավորված զոհերի մեծ թիվը: Հրդեհի տարածմանը նպաստել են նաեւ կրակի ճիրաններում հայտնված փոքր խանութներում պահվող դյուրավառ նյութերը եւ հեղուկները: Հրդեհը մեկուսացնելու համար պահանջվել է երեք ժամ:

Փիղը՝ Ցյուրիխի փողոցներում

Հունիսի 6-ին Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքի ոստիկանությունը շուրջ մեկ ժամ որսում էր կրկեսից փախած էգ փղին:

Սաբու անունով փիղը փախել էր այն պահին, երբ նրան կրկեսից տեղափոխում էին մեքենայի մեջ: Կենդանին զբոսնել է Ցյուրիխի գործարար կենտրոնում ու անգամ հասցրել լողանալ լճում:

Չծրագրավորված զբոսանքի ընթացքում փղին ուղեկցել են տեղի ոստիկանության աշխատակիցները: Միայն մեկ ժամ անց կենդանավարժը համոզել է Սաբուին վերադառնալ կրկես:

Ըստ Ցյուրիխի ոստիկանության ներկայացուցիչների՝ փղի զբոսանքից հետո քաղաքում ավերածություններ չեն եղել: Սաբուն եւս չի տուժել:

Մահացու փոռնադո ԱՄՆ-ում

Անցյալ շաբաթ ավերիչ տոռնադո է անցել ԱՄՆ-ի մի շարք արեւմտյան նահանգների տարածքով: Փլուզվել են հարյուրավոր տներ, զոհվել է յոթ մարդ:

Տարերքից հատկապես տուժել է Օհայո նահանգը, որտեղ տոռնադոն թողել է ավերածությունների 13-կիլոմետրանոց գոտի: Միլբերի քաղաքում տոռնադոն փլուզել է տեղի դպրոցի շենքը:

Այս տարի սա արդեն տոռնադոների երկրորդ ալիքն է: Ապրիլի վերջին Միսիսիպի նահանգի տարածքով անցած տոռնադոն տասը մարդու կյանք էր խլել:

Ֆաինա Թյունիբաբյան

արագ արձագանքման ծառայություններ

<<< հրդեհ է բռնկվել Եղեգնաձոր քաղաքի Շահումյան 16 հասցեում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ եւ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը: Հրդեհը մեկուսացվել է ժամը 12.33-ին, մարվել՝ 12.56-ին:

Այրվել է շենքի տանիքի ծածկը՝ 10 քմ մակերեսով:

***

Հունիսի 4-ին, ժամը 16.54-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Վայոց ձորի մարզում՝ Ջերմուկի Ջախափնյակ թաղամասում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 17.40-ին, մարվել՝ 18.00-ին: Այրվել են Հ. Մանուկյանին պատկանող անասնագոմի տանիքի փայտյա կառուցատարրերը եւ 10 հակ անասնակեր:

Այրվել է խոտ

Հունիսի 4-ին, ժամը 19.33-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Սեբաստիա 32/2 հասցեում՝ «Հայորդաց տան» մոտակայքում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 19.48-ին, մարվել՝ 19.53-ին: Այրվել է 800 քմ մակերեսով խոտ:

***

Հունիսի 5-ին, ժամը 15.13-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Ծովակալ Իսակովի պողոտայի 10-րդ շենքին հարակից տարածքում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 15.24-ին, մարվել՝ 15.37-ին:

Այրվել է 600 քմ մակերեսով խոտածածկ տարածք:

Հրդեհ տանը

Հունիսի 7-ին, ժամը 11.28-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Լոռու մարզի Լերմոնտովո գյուղում:

Դեպքի վայր է մեկնել երեք մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 14.54-ին, մարվել՝ 15.56-ին:

Ամբողջությամբ այրվել է մեկհարկանի տուն՝ 80 քմ մակերեսով:

Տան մեջ հայտնաբերվել է տանտիրոջ՝ 1959 թ. ծնված Միխայիլ Չիչովի դին, այրված վիճակում:

Հրդեհ խորտկարանում

Հունիսի 8-ին, ժամը 04.58-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Թբիլիսյան խճուղում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 05.19-ին, մարվել՝ 05.38-ին: Ամբողջությամբ այրվել է 50 քմ մակերեսով խորտկարանը: Հրդեհի հետեւանքով խորտկարանի տարածքում տեղի է ունեցել 20 կգ գազի բալոնի պայթյուն: Տուժածներ չկան:

Այրվել է փուն

Հունիսի 8-ին, ժամը 06.00-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Լոռու մարզի Ճոճկան գյուղում: Ժամը 06.01-ին դեպքի վայր է մեկնել Թումանյանի հրշեջ փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 08.00-ին, մարվել՝ ժամը 10.00-ին:

Ամբողջությամբ այրվել են Ն. Գալստյանին պատկանող՝ 60 քմ մակերեսով երկհարկանի տունը, եւ հարակից տան (տանտեր՝ Վ. Գալստյան) տանիքը՝ 8 քմ մակերեսով:

Այրվել են խոտածածկ տարածքներ

Հունիսի 8-ի, ժամը 15.00-ից մինչեւ հունիսի 9-ի, ժամը 02.00-ն ընկած ժամանակահատվածում բազում ահազանգեր են ստացվել մայրաքաղաքի մի շարք հասցեներին հարակից խոտածածկ տարածքներում բռնկված հրդեհների մասին: Մասնավորապես՝ Արզումանյան 4 հասցեին հարակից տարածքում այրվել է 500 քմ մակերեսով խոտ եւ թփուտ, Կ. Դեմիրճյանի անվան Մարզահամերգային համալիրին հարակից տարածքում՝ 300, Հրազդանի կիրճում՝ 700, Ծովակալ Իսակովի 25 եւ 29 հասցեներին հարակից տարածքներում, համապատասխանաբար՝ 1200 եւ 500, Ռ. Մելիքյան 1 հասցեում գտնվող «Սբ. Աստվածածին» եկեղեցուն հարակից այգում՝ 800, Սարի Թաղի թիվ 47 դպրոցին հարակից տարածքում՝ 500 քմ մակերեսներով խոտ:

***

Հունիսի 8-ին, ժամը 20.25-ին նմանատիպ ահազանգ է ստացվել նաեւ Արմավիրի մարզից. Էջմիածին քաղաքի «Սբ. Հռիփսիմե» եկեղեցուն հարակից խոտածածկ տարածքում այրվել է 1000 քմ մակերեսով խոտ: Դեպքերի վայրեր է մեկնել համապատասխանաբար մեկական՝ ընդհանուր թվով ութ մարտական հաշվարկ:

Հրդեհները մեկուսացվել են եւ արագորեն մարվել:

Հրդեհներ

Տավուշի մարզից տեղեկություն է ստացվել, որ հունիսի 9-ին, ժամը 23.05-ին հրդեհ է բռնկվել Արնիս գյուղում: Ժամը 23.05-ին դեպքի վայր է մեկնել Նոյեմբերյանից երկու մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 00.11-ին, մարվել՝ ժամը 00.48-ին:

Այրվել են Ս. Ալավերդյանին պատկանող ավտոտնակի՝ 24 քմ մակերեսով տանիքը, եւ «ՈՒԱԶ-3962» մակնիշի՝ առանց պետհամարանիշի ավտոմեքենայի շարժիչի հատվածը:

Խնայի՛ր բնությունը

Հունիսի 5-ը Շրջակա միջավայրի պաշտպանության օրն էր: Առաջին անգամ այս օրը նշվել է 1972թ., երբ Ստոկհոլմում անցկացվեց շրջակա միջավայրի խնդիրներին նվիրված առաջին կոնֆերանսը: Այդ օրվանից ամեն տարի նույն օրը շրջակա միջավայրի խնդիրներով մտահոգ մարդիկ հավաքվում են, տարբեր միջոցառումներ են կազմակերպում, որպեսզի այդ խնդիրների կարեւորության գիտակցումը հասցնեն յուրաքանչյուրին:

Այս տարի Շրջակա միջավայրի պաշտպանության համաշխարհային օրն անցավ «Տարբեր տեսակներ: Մեկ մոլորակ: Մեկ ապագա» նշանաբանով:

Հայտարարություն

Արտակարգ թերթի 2010 թ. մայիսի 28-ի N19 (340) համարում տպագրված Պետական հրդեհային տեսչության Երեւանի հրդեհային տեսչության տեսչական բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 34/1-4.2-6) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը 29.07.2010 թ. փոխարեն կկայանա 29.06.2010 թ. (ժամը 14:15-ին, Հայաստանի փրկարար ծառայության շենքում (ք. Երեւան, Պուշկինի 25):

Դիմումների ընդունման վերջին ժամկետը՝ 11.07.2010 թ. փոխարեն՝ 11.06.2010 թ.:

սեյսմիկ պաշտպանություն

Ս. թ. հունիսի 3-ից 9-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի եւ հարակից տարածքներում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են մեկ թույլ երկրաշարժ: 3 բալանոց սեյսմիկ ցնցումը տեղի է ունեցել հունիսի 9-ին Հայաստան-Ադրբեջան (Նախիջեւան) սահմանային գոտում, Քաջարան քաղաքից 20 կմ դեպի հարավ-արեւմուտք:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել յոթ երկրաշարժ: Հունիսի 4-ին Իրանի տարածքում գրանցվել է երեք երկրաշարժ, առաջինը՝ 4 բալ ուժգնությամբ, Մակու քաղաքից 25 կմ դեպի հարավ-արեւելք, երկրորդը՝ նույն ուժգնությամբ, Մերենդ քաղաքից 23 կմ դեպի հարավ-արեւմուտք, իսկ երրորդը՝ 3 բալ ուժգնությամբ, Խոյ քաղաքից 19 կմ դեպի հյուսիս-արեւմուտք: Հաջորդ օրը Թուրքիայում՝ Սարիղամիշ քաղաքից 24 կմ դեպի հյուսիս-արեւմուտք, տեղի է ունեցել երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3-4 բալ: Հունիսի 8-ին 3 բալ ուժգնությամբ երեք թույլ երկրաշարժ է գրանցվել. Իրան-Թուրքիա սահմանային գոտում՝ Մակու քաղաքից 25 կմ դեպի հյուսիս-արեւելք, Ադրբեջան-Վրաստան սահմանային գոտում՝ Զակատալա քաղաքից 25 կմ դեպի արեւմուտք, Թուրքիայում՝ Կարս քաղաքից 16 կմ հյուսիս-արեւմուտք:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է մեկ ուժեղ երկրաշարժ: Այն տեղի է ունեցել հունիսի 9-ին Խաղաղ օվկիանոսի հարավ-արեւմտյան հատվածում՝ Վանուատու կղզիների տարածքում, եւ ունեցել է 6.0 մագնիտուդ: Տուժածներ եւ ավերածություններ չկան:

ՍՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Հունիսի 3-9-ը դիտված հիդրոօդերեւութաբանական պայմանները ՀՀ-ում

Հունիսի 3-ից 9-ը հանրապետությունում դիտվել է անձրեւ եւ ամպրոպ: Տեղումների գումարային քանակը Գյումրիում կազմել է 28 մմ, Տաշիրում՝ 21 մմ, Վանաձորում եւ Ստեփանավանում՝ 20 մմ, Օձունում՝ 18 մմ, Մասրիկում՝ 17 մմ, Ամասիայում՝ 16 մմ, մնացած շրջաններում՝ 2-12 մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հունիսի 3-ից 6-ը ամբողջ հանրապետությունում բարձր է եղել է նորմայից 4-7 ºC, հունիսի 7-9-ը՝ 1-3 ºC:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Արարատյան դաշտում եւ Սյունիքի հովիտներում՝ +34... +37 ºC (Մեղրիում՝ +40 ºC), Լոռիում եւ Տավուշում՝ +31... +34 ºC, Սյունիքի նախալեռներում՝ +30... +33 ºC, Արցախում՝ +29... +31 ºC, եւ լեռնային շրջաններում՝ +25... +28 ºC (Գյումրիում՝ +30 ºC):

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ +3... +10 ºC, Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում՝ +7... +12 ºC, Տավուշում եւ Արարատյան դաշտում՝ +11... +16 ºC, Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +16... +18 ºC:

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում հունիսի 11-ին եւ 12-ին սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, տեղ-տեղ հնարավոր է կարկուտ: Հունիսի 13-ից 15-ը սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: Քամին՝ հարավարեւմտյան՝ 2-7 մ/վրկ արագությամբ, ամպրոպի ժամանակ ուժգնացում՝ 19-24 մ/վրկ: Օդի ջերմաստիճանն աստիճանաբար կբարձրանա 2-4 ºC:

Օդի ջերմաստիճանը հունիսի 11-ի գիշերը լեռնային շրջաններում +5... +10 ºC, Լոռիում՝ +7... +12 ºC, Տավուշում՝ +11... +16 ºC, Արարատյան դաշտի նախալեռներում՝ +12... +17 ºC, Արարատյան դաշտում՝ +13... +18 ºC, Սյունիքի հովիտներում՝ +16... +21 ºC, Սյունիքի նախալեռներում՝ +10... +15 ºC, Արցախում՝ +16... +19 ºC:

Օդի ջերմաստիճանը հունիսի 11-ի ցերեկը լեռնային շրջաններում +20... +25 ºC, Լոռիում՝ +23... +28 ºC, Տավուշում՝ +26... +31 ºC, Արարատյան դաշտի նախալեռներում՝ +28... +32 ºC, Արարատյան դաշտում՝ +30... +34 ºC, Սյունիքի հովիտներում՝ +31... +36 ºC, Սյունիքի նախալեռներում՝ +25... +29 ºC, Արցախում՝ +23... +27 ºC:

Երեւանում սպասվում է առանց տեղումների եղանակ: Օդի ջերմաստիճանը հունիսի 11-ի գիշերը կլինի +16... +18 ºC, ցերեկը՝ +31... +33 ºC:



Նոր կայաններ կարկուտից պաշտպանվելու համար

Որ կարկուտն էլ իր ծեծած տեղը չծեծի

ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայությանը պատկանող ռադիոլոկացիոն կենտրոնը գտնվում է Արտաշավանում: Անցյալ շաբաթ Ռադիոլոկացիոն կենտրոնի աշխատանքին ծանոթանալու էր գնացել ԱԻ նախարար Արմեն Երիցյանը: Այստեղից են կառավարվում Հայաստանում գտնվող հակակարկտային բոլոր 42 կայանները: Դրանք Արմավիրի, Արագածոտնի ու Արարատի մարզերը պաշտպանում են հնարավոր կարկտահարությունից:

- Մենք ռադիոլոկատորների միջոցով ստանում ենք ամպերի ֆիզիկական պարամետրերը, որոնք ավտոմատ ձեւով անցնում են համակարգչի մեջ, որի միջոցով էլ որոշվում է ամպի կարկտավտանգավորության աստիճանը: Եթե համոզվում ենք, որ ամպն իր մեջ կարկուտ է պարունակում, սկսում ենք ներգործության աշխատանքները, - բացատրում է ռադիոլոկացիոն կենտրոնի տնօրեն Արամ Կարապետյանը, - *ներգործության աշխատանքները սկսում ենք այն ժամանակ, երբ կարկտավտանգ ամպերը դեռեւս պաշտպանվող տարածքներին չեն հասել:*

42 կայաններից յուրաքանչյուրը ներգործում է իր գտնվելու վայրից 500 մետր շառավղով:

Հակակարկտային աշխատանքների համար պատասխանատու է ԱԻՆ ՀՓԾ մթնոլորտային երեւույթների վրա ակտիվ ներգործության ծառայությունը: Խորհրդային միության փլուզումից հետո այն վերագործարկվել է 2003 թվականից: Այսօր փորձում են վերադարձնել նախկին հզորությունը:

- Հակակարկտային ծառայություն տարածաշրջանում ոչ մի տեղ չկա, չնայած կարկուտը գալիս է եւ Ադրբեջանում, եւ Վրաստանում, եւ Թուրքիայում, եւ Իրանում, - ասում է ԱԻՆ ՀՓԾ մթնոլորտային երեւույթների վրա ակտիվ ներգործության ծառայության տնօրեն Ռոբերտ Հովսեփյանը:

Այս տարի 42 կայանների միջոցով կասեցվել է շուրջ 70 կարկտավտանգ պրոցես, կատարվել է մոտ 75 000 կրակոց: Կառավարության մի քանի որոշումներով եւ նախագահի հաստատած հայեցակարգով նախատեսվում է 2-3 տարում հակակարկտային կայանների թիվը հանրապետությունում հասցնել 250-ի:

- Ըստ Կառավարության 2 որոշման պետք է ստեղծվի առաջնային պաշտպանական գոտի՝ ամբողջ պետական սահմանի երկայնությամբ՝ մինչեւ Շիրակի մարզ, դրանից հետո կորոշենք, թե 2-րդ, 3-րդ գոտիները որտեղ են լինելու եւ ինչ տիպի կայաններ պիտի տեղադրվեն, - ասում է ԱԻՆ ՀՓԾ մթնոլորտային երեւույթների վրա ակտիվ ներգործության ծառայության տնօրեն Ռոբերտ Հովսեփյանը:

- Կա մեկ խնդիր, - պարզաբանում է Արտաշավանի ռադիոլոկացիոն կենտրոնի տնօրեն Արամ Կարապետյանը, - *մեկ ռադիոլոկացիոն կենտրոնից կառավարումը կդառնա դժվար, քանի որ տարածքն է մեծ, կայաններն են շատանում: Պետք են նոր կենտրոններ, ամեն մարզի համար՝ 1 հատ, որովհետեւ կարկտային պրոցեսներն այնպիսին են, որ ուշ արձագանման դեպքում հնարավոր է հակառակ արդյունք:*

- Հիմա պաշտպանվող տարածքը կազմում է 3400 հեկտար, 50 կայանը կառուցելուց հետո կկազմի 10000 հեկտար: Դա մեծ տարածք է, եւ այդ 10000 հեկտարը զբաղեցված է բավական թանկարժեք գյուղատնտեսական մշակաբույսերով, - ասում է Մթնոլորտային երեւույթների վրա ակտիվ ներգործության ծառայության տնօրեն Ռոբերտ Հովսեփյանը: Հակակարկտային կայանների թիվը 250-ի հասցնելու ծրագիրն արդեն սկսել է իրագործվել: Ներկայումս Արարատում կառուցվում է 28 նոր կայան, ու առաջիկա ամիսների ընթացքում դրանց ընդհանուր թիվն արդեն 70 կլինի:

Անի Ստեփանյան

Անհատական ավտոտնակների հրդեհային անվտանգությունը

Մեր հանրապետությունում ամեն տարի տեղի են ունենում բազմաթիվ հրդեհներ անհատական ավտոտնակներում, որոնք խոշոր վնաս են հասցնում մարդկանց ունեցվածքին, երբեմն էլ՝ վտանգում նրանց կյանքն ու առողջությունը: Դրանց գերակշիռ մասն առաջանում է հենց իրենց՝ քաղաքացիների մեղքով, կրակի հետ անզգույշ վարվելուց, առաջացած հրդեհներն սկզբնական շրջանում հանգցնելու ձեւերը չիմանալուց եւ այլն: Բավական է նշել, որ միայն վերջին 5 տարիների ընթացքում արձանագրվել է նմանօրինակ 185 հրդեհ, զոհվել է՝ 6, այրվածքներ ստացել՝ 19 մարդ: Ամբողջությամբ ոչնչացել է 11 ավտոտնակ եւ 18 ավտոմեքենա, պատճառվել է շուրջ 192 միլիոն դրամի նյութական վնաս:

Խոսենք փաստերով. Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղի բնակիչ Թ. Պետրոսյանն իր ավտոտնակի անմիջական հարեւանությամբ այրել է կուտակված աղբը եւ թողել առանց հսկողության: Քամու «օգնությամբ» կրակի կայծերը տարածվել են, եւ առաջացած հրդեհից այրվել-ոչնչացել է ավտոտնակը՝ ներսում կայանված ավտոմեքենայի հետ միասին:

Գյումրի քաղաքի բնակիչ Հ.Կարապետյանն ավտոտնակի ջեռուցման նպատակով օգտագործել է փայտով գործող թիթեղյա վառարան՝ կոպտորեն խախտելով դրա տեղակայման եւ շահագործման կանոնները, ինչի հետեւանքով, մաշված ծխատար խողովակների բացվածքներից դուրս եկած կրակի կայծերն ընկել են ավտոտնակի փայտե հատակին եւ այրել այն: Դեպքի վայր ժամանած հրշեջներին միայն 1.5 ժամ հետո է հաջողվել սանձել մոլեգնած հրդեհը:

Երեւանի բնակիչ Դ.Նադարյանն ավտոտնակում միացրել է ինքնաշեն, բաց գալարագծերով էլեկտրական սալիկը եւ, թողնելով առանց հսկողության, տեւական ժամանակով բացակայել է: Հսկողությունից դուրս գտնվող ջեռուցման պարագայի ջերմային ազդեցությունից առաջացել է հրդեհ՝ պատճառելով զգալի նյութական վնաս:

Արարատի մարզի Երասխ գյուղի բնակիչ Ա. Զեյնալյանը հսկողությունից դուրս է թողել իր անչափահաս երեխաներին, որոնք կրակ են վառել ավտոտնակում՝ հրդեհելով այն, ինչի հետեւանքով այրվել է ավտոտնակում կայանված ավտոմեքենան եւ տանիքում կուտակված շուրջ 3 տոննա անասնակերը: Միայն երջանիկ պատահականության շնորհիվ երեխաները չեն տուժել:

Իսկ Արտաշատի բնակիչ Ռ.Մովսիսյանի ավտոտնակում առաջացած հրդեհի պատճառը տարրական անփութությունն ու անզգուշությունն էր: Նա ավտոտնակում կուտակել էր զանազան տնտեսական իրեր, շինարարական նյութերի մնացորդներ, այլ դյուրավառ նյութեր՝ ստեղծելով հրդեհավտանգ իրավիճակ, եւ նրա

կողմից անզգուշորեն նետված, չհանգցրած ծխախոտի մնացորդը բավական էր եղել, որպեսզի հաշված րոպեների ընթացքում շինությունը կրակի ճարակ դառնա:

Իրենց վտանգավորությամբ հատկապես առանձնանում են դյուրավառ հեղուկները՝ բենզին, կերոսին, նավթ եւ այլն, որոնք ամենափոքր իսկ անզգուշության դեպքում կարող են բռնկվել եւ հրդեհի առաջացման պատճառ դառնալ: Ցավոք, այս իրողությունը հաճախ անտեսվում է մարդկանց կողմից՝ բերելով անուղղելի հետեւանքների: Արտաշատի Երեւանյան 5 շենքի բնակիչ, անչափահաս Ա.Սիմոնյանը վառած մոմը ձեռքին մտել է ավտոտնակ՝ ավտոմեքենայի լցարկման համար բենզին վերցնելու նպատակով: Այդ գործողությունն իրականացնելու պահին նա անզգուշաբար վայր է գցել մոմը եւ դյուրավառ հեղուկն ակնթարթորեն բոցավառվել է: Օպերատիվ կերպով դեպքի վայր ներկայացած հրշեջներին հաջողվել է արագ մարել հրդեհը՝ կանխելով դրա տարածումը:

Իսկ Տավուշի մարզի Բերքաբեր գյուղի բնակիչ Ռ.Հարությունյանի ավտոտնակում բենզինի տարողության բռնկման հետեւանքով կրակի ճարակ դարձան ավտոտնակը եւ այնտեղ կայանված «ՎԱԶ 2107» մակնիշի ավտոմեքենան:

Կարելի է երկար շարունակել նմանատիպ հրդեհների նկարագրությունը, սակայն բերված օրինակներն էլ բավարար են հասկանալու համար, թե ինչի կարող է հանգեցնել հրդեհային անվտանգության տարրական կանոնների անտեսումը:

Անդրադառնանք այն կանխարգելիչ միջոցառումներին, որոնց իրականացումը թույլ կտա խուսափել հավանական հրդեհներից: Նախ՝ արգելվում է ավտոմեքենան կայանել ավտոտնակում, եթե նկատվում են կաթոցներ կարբյուրացիոն համակարգից, բաքից կամ բենզինի խողովակներից: Ավտոտնակում թույլատրվում է պահել 20 լիտրից ոչ ավել վառելանյութ, 5 լիտր քսայուղ, ընդ որում՝ դյուրավառ հեղուկները պետք է պահվեն մետաղյա հերմետիկ տարաների մեջ:

Ավտոտնակում չի կարելի ծխել եւ օգտվել բաց կրակից: Թափված վառելանյութը եւ յուղը անհրաժեշտ է ավազի օգնությամբ մաքրել եւ հեռացնել: Ծագած հրդեհը սկզբնական շրջանում հանգցնելու համար պետք է ունենալ կրակմարիչ, մեկ խորանարդ մետր տարողությամբ՝ ավազով լցված արկղ, բահ եւ ասբեստյա ծածկոց: Ավազի բացակայության դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել հող, իսկ ասբեստյա ծածկոցի փոխարեն՝ բրդյա ծածկոց՝ նախապես ջրում թրջելով: Հրդեհ առաջանալու դեպքում առաջին հերթին անհրաժեշտ է անմիջապես այդ տեղից դուրս բերել վառելանյութի եւ քսայուղերի պաշարը, որոնք դեռ բռնկված չեն կրակով, իսկ եթե վերջիններս էլ են այրվում եւ սպառնում ավտոմեքենային՝ այն անհապաղ պետք է հեռացնել ավտոտնակից:

Վերը նշված միջոցառումների կատարումը եւ պատշաճ զգոնությունը թույլ կտան նվազեցնել հրդեհների առաջացման հնարավորությունը եւ խուսափել անցանկալի հետեւանքներից:

Սերգեյ Հայրապետյան
ՊՀՏ ՀՀՎՀՔ բաժնի պետ

Սեղանի թենիսի առաջնություն

Հունիսի 8-ին ԱԻՆ ՀՓԾ փրկարար ուժերի վարչության ստորաբաժանումների միջեւ անցկացվեց սեղանի թենիսի հերթական առաջնությունը: Այս անգամ էլ այն անցկացվեց «Դինամո» մարզադահլիճում՝ ՀՀ ոստիկանության «Դինամո» ՄՀԿ-ի ղեկավարության բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ:

Փրկարար ուժերի վարչության ստորաբաժանումների միջեւ մրցումներն անցկացվում են տարբեր սպորտաձեւերում՝ շախմատ ու վոլեյբոլ, շաշկի, մինիֆուտբոլ եւ այլն: Դրանք կազմակերպում է ՓՈՒՎ փրկարարական ուժերի նախապատրաստման եւ համակարգման բաժինը: Բաժնի պետ, փ/ծ գնդապետ Պ. Կարապետյանը, բացելով մրցումները, նախ շնորհակալություն հայտնեց «Դինամո» մարզահամալիրի ղեկավարությանը՝ աջակցության համար, ապա մասնակիցներին մաղթեց հաջող ու անզիջում պայքար:

Այդ պայքարի արդյունքում էլ երրորդ մարցանակակիր դարձավ Երեւանի թիվ 8 ՀՓԶ հրամանատարի տեղակալ, փ. ծ. մայոր Տիգրան Կոստանյանը: Իսկ չեմպիոնի կոչման համար եզրափակչում ուժերն էին չափում ՓՈՒՎ հրդեհաշիջման կազմակերպման բաժնի վարորդ, կրտսեր սերժանտ Կարեն Դանիելյանն ու Երեւանի թիվ 3 ՀՓԶ օղակի հրամանատար, ավագ սերժանտ Մարտին Գասպարյանը: Հավասարների պայքարում ի վերջո հաղթեց եւ չեմպիոնի տիտղոսը նվաճեց Կ. Դանիելյանը: Մ. Գասպարյանը ստիպված էր բավարարվել երկրորդ տեղով:

Սակայն, ինչպես ընդունված է ասել նման դեպքերում, հաղթեցին սպորտն ու բարեկամությունը: Բոլորն էլ սրտանց շնորհավորեցին հաղթողներին: Իսկ ցանկությունը մեկն էր. նման սպորտային միջոցառումներ կազմակերպվեն ավելի հաճախ, քանի որ դրանք նպաստում են կոլեկտիվի մերձեցմանն ու բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձեւավորմանը: Եվ այսպես, հաջորդը շախմատի մրցումներն են, որոնք նախատեսված է անցկացնել հուլիսին:

Արա Մովսիսյան

Օձերի կծածներ, կարիճների ու միջատների խայթոցներ

Օձերի կծածներից մահացածների մոտ 40 տոկոսը մահանում է ոչ թե թույնից, այլ սարսափից:

Հայաստանում հանդիպում են 21 տեսակի օձեր, որոնցից թունավոր են միայն չորսը՝ իժերի ընտանիքին պատկանող տափաստանային իժը, Դարեւսկու իժը, փոքրասիական իժը եւ անդրկովկասյան գյուրզան:

Օձերի այս 4 տեսակները պատկանում են իժերի ընտանիքին, որոնց թույնն ազդում է սրտանոթային համակարգի վրա: Թունավոր օձերի վերին ծնոտի առջեւի մասում տեղավորված են 2 խոշոր ժանիքատիպ ատամներ, որոնք կապված են թունավոր գեղձերի հետ:

Հայաստանում ապրող թունավոր օձերը պատկանում են իժերի ընտանիքին եւ ունեն այնպիսի բնորոշ հատկանիշներ, որոնք չունեն ոչ թունավոր օձերը: Դրանց գլխի վերին մասը ծածկված է մանր, անկանոն դասավորված թեփուկներով, որոնք իրենց չափերով նման են մարմնի վրա գտնվող թեփուկներին: Պոչն, ի տարբերություն ոչ թունավոր օձերի պոչի, կտրուկ ընդհատվում է: Աչքերի բիբը ճեղքաձեւ է, այն դեպքում, երբ ոչ թունավորներինը՝ կլոր է: Գլուխն ակնհայտորեն առանձնացած է պարանոցից:

Սակայն ոչ մասնագետի համար դժվար է արտաքին հատկանիշներով անսխալ զանազանել թունավոր օձը ոչ թունավորից: Այնինչ օձի կծելուց հետո մաշկի վրա մնացած հետքերով կարելի է հեշտությամբ կողմնորոշվել:

Թունավոր օձի կծած տեղում մարմնի վրա նկատվում են թունավոր ատամներից առաջացած երկու խոր վերքեր, որոնց միջեւ երեւում են ոչ թունավոր ատամներից մնացած երկու շարք ավելի մանր հետքեր: Իսկ ոչ թունավոր օձերի կծած տեղում մարմնի վրա երեւում են չորս շարք երկայնական դասավորված կետիկներ:

Թունավորման վտանգավորությունը կախված է օձի չափից, տարիքից, տեսակից: Վերջին առումով առավել վտանգավոր են գյուրզաները: Օձերն ավելի վտանգավոր են ամռանը: Թունավորման ծանրությունը կախված է նաեւ կծածների քանակից, տեղակայումից եւ խորությունից: Առավել վտանգավոր են պարանոցի եւ գլխի շրջանում տեղակայված կծածները, քանի որ այտուցի հետեւանքով կարող է առաջանալ վերին շնչուղիների խցանում: Լուրջ են նաեւ իրանի եւ ձեռքի հատվածում կծածները, որովհետեւ այդ դեպքում թույնը շատ արագ տարածվում է ամբողջ օրգանիզմում:

Կծելու ժամանակ թունավոր օձի թույնը ներարկվում է մարդու մարմին: Կծած տեղում մարդն ուժեղ ցավ եւ այրոց է զգում: Քիչ անց կծած տեղը կարմրում է եւ սկսում այտուցվել: Այտուցը հետզհետե տարածվում է ամբողջ մարմնով, զգացվում է ուժեղ թուլություն, սրտխառնոց, փսխում: Տուժածը կարող է ունենալ գլխապտույտ, տեսողության եւ խոսքի խանգարումներ: Նկատվում է վերջույթների թուլություն կամ զգայունության կորուստ: Տուժածի շնչառությունը դժվարացած է, անոթազարկը՝ հաճախացած: Հնարավոր է արյունահոսություն բերանից, քթից եւ հետանցքից:

Ի՞նչ անել

Ոչ թունավոր օձի կծածի դեպքում վերքը լվացեք եւ ծածկեք ստերիլ վիրակապով:

Թունավոր օձի կծածի դեպքում մեծ նշանակություն ունի ժամանակին ցուցաբերված առաջին օգնությունը:

Հնարավորության դեպքում աշխատեք հիշել կծող օձի տեսքը:

Օձի կծելուց հետո առաջին 5 րոպեի ընթացքում սեղմեք կծած տեղի շուրջը, որպեսզի արյուն դուրս հոսի վերքից: Այս գործողությունը թույլ է տալիս որոշ չափով հեռացնել թույնը: Սեղմելը դադարեցրեք, երբ վերքից այլեւս արյուն դուրս չի գալիս: Հանգստացրեք տուժածին, քանի որ նյարդային, գրգռված վիճակն արագացնում է արյան շրջանառությունը՝ նպաստելով մարմնում թույնի տարածմանը: Հանեք բոլոր զարդերը եւ ճնշող իրերը: Եթե օձը կծել է վերջույթը, ապա անշարժացրեք այն եւ պահեք սրտի մակարդակից ցածր: Սահմանափակեք տուժածի շարժումները, նստեցրեք կամ պառկեցրեք

նրան: Թունավոր օձի կծելու դեպքում ճշմարիտ է հետեւյալ ասացվածքը՝ «Օձի կծածը բուժելու ամենաարդյունավետ միջոցը ավտոմեքենայի բանալիներն են»: Ժամանակն այս դեպքում ամենաորոշիչ գործոնն է: Շատ կարեւոր է ահազանգը կամ տուժածի արագ տեղափոխումը հիվանդանոց, սակայն դա պետք է անել պասիվ կերպով՝ բացառելով տուժածի ցանկացած շարժում: Այդ ընթացքում տուժածին խմեցրեք մեծ քանակությամբ հեղուկներ՝ ջուր, հյութ, թեյ, թան եւ այլն: Վերահսկեք տուժածի վիճակը, տվյալները գրանցեք եւ համապատասխան առաջին օգնություն ցուցաբերեք:

Ինչ չի կարելի անել

Կան գործողություններ, որոնք չի կարելի անել օձերի կծածների դեպքում:

Մի՛ արտածծեք թույնը բերանով. բերանում եղած անգամ փոքր վերքից թույնը կարող է անցնել ձեր օրգանիզմ:

Կծած տեղի շրջանում կտրվածքներ մի՛ արեք, մի՛ այրեք կծած տեղը. ցավն արագացնում է արյան շրջանառությունը, ինչը նպաստում է թույնի տարածմանը:

Մի՛ օգտագործեք սառը թրջոցներ եւ սառցապարկեր. դրանք օգուտ չեն տա տուժածին եւ կարող են նրա ինքնագիտակցությունը վատացնել:

Օձերի կծածների դեպքում չի կարելի տեղադրել լարան՝ սեղմող միջոցներ. սա կբերի տվյալ հատվածի հյուսվածքների մեռուկացման, ինչի հետեւանքով տուժածը կարող է կորցնել վերջույթը:

Տուժածին մի՛ տվեք ոգելից խմիչքներ. սա եւս արագանցում է արյան շրջանառությունը:

Կարիճների եւ միջատների խայթոցներ

Հայաստանում տարածված են երեք տեսակի կարիճներ՝ դեղին, սեւ եւ խայտաբղետ: Այս կարիճների եւ ընդհանրապես միջատների խայթոցները մահացու չեն մարդու համար: Մահացության դեպքերը հիմնականում պայմանավորված են սուր ալերգիկ ռեակցիաներով: Ավելի վտանգավոր են բերանի խոռոչում կամ նրա շուրջը տեղակայված խայթոցները, որովհետեւ այդ դեպքում զարգանում է վերին շնչուղիների այտուց եւ շնչառության խիստ դժվարացում:

Ի՞նչ անել

Կարիճների եւ միջատների խայթոցների ժամանակ խայթած տեղում ցավ է լինում, այտուց, կարմրություն: Նման դեպքերում օգնություն ցուցաբերելիս մաշկի վրայից հեռացրեք խայթը եւ վնասված մասը պահեք սառը ջրի տակ: Այնուհետեւ վերքը ծածկեք մաքուր գործվածքով:

Եթե խայթոցը պարանոցի կամ բերանի շրջանում է, ապա տուժածին կում-կում խմեցրեք մեծ քանակությամբ սառը ջուր: Պարզեք՝ տուժածն ունի՞, արդյոք, ալերգիա միջատների խայթոցներից: Եթե տուժածն ալերգիկ է, ապա այս դեպքում հնարավոր է, որ նա ենթարկվի անաֆիլակտիկ շոկի: Դա որեւէ արտաքին ազդակի նկատմամբ մարմնի սուր ալերգիկ ռեակցիան է: Անաֆիլակտիկ շոկը կարող է զարգանալ միջատների խայթոցներից, որոշ դեղամի-

ջոցներից: Դա կատարվում է շատ արագ, եւ հաճախ հնարավոր չի լինում կանխատեսել ու կանխարգելել այն:

Նման դեպքերում տուժածն ունենում է գլխացավ, գիտակցության խանգարում, մաշկի կարմրություն, տաքություն, ցան, այտուցներ: Տուժածի շնչառությունը շնչուղիների այտուցման հետեւանքով դժվարացած է, աղմկոտ, անոթազարկը՝ թույլ եւ արագացած:

Անաֆիլակտիկ շոկի դեպքում անհապաղ ահազանգեք շտապ օգնություն, եւ եթե տուժածն իր մոտ պահում է հակաալերգիկ դեղամիջոցներ, ապա օգնեք նրան ընդունել դրանք:

Կանխարգելում

Օձերի կծածներից, կարիճների եւ միջատների խայթոցներից կարելի է խուսափել՝ պահպանելով մի շարք պարզ, կանխարգելիչ կանոններ: Բնության գրկում զբոսնելու, հանգստանալու, արշավների կամ էլ աշխատանքի ժամանակ հագեք բաց գույնի հագուստ, որի վրա լավ երեւում են մուգ գույնի միջատները: Հագեք նաեւ երկարաճիտ եւ ամուր կոշիկներ: Տաբատի փողքերը դրեք գուլպայի կամ կոշիկների մեջ, շապիկի եզրերը՝ տաբատի մեջ: Զբոսնելիս քայլեք ծառուղու մեջտեղով, խուսափեք բարձր խոտերից: Օձի պատահելիս մի՛ տրորեք, մի՛ անհանգստացրեք նրան, ետ դարձեք նույն ճանապարհով, որով եկել եք եւ եղեք ուշադիր, որովհետեւ շուրջը կարող են լինել ուրիշ օձեր:

Վերադառնալով տուն՝ ուշադիր զննեք ձեր մարմինը, հատկապես մազածածկ մասերը՝ միջատներ կամ նրանց խայթոցները հայտնաբերելու համար:

Ստեղծագործում են հրշեջները

Անդունդի եզրին

(հատված)

1.
Մի օր աշնան քամին փչեց,
Ծառի ճյուղից սերմեր պոկեց,
Ու տարածեց ողջ անտառով՝
Քշեց-սփռեց սար ու ձորով:

***

Ամեն մի սերմ իջավ մի տեղ՝
Մեկը՝ լավ տեղ, մյուսը՝ վատ տեղ:
Մեկը իջավ պարարտ հողին,
Մեկը՝ հեծնած տերեւ դեղին՝
Քամու հոսքը բռնած թռա՜վ,
Մի գյուղացու այգում իջավ:
Մեկը իջավ սարի ծայրին,
Մյուսն՝ այդ սարի կանաչ լանջին:
Մեկը ընկավ մի դաշտ ծարավ,
Մեկին քշե՜ց գետը, տարավ…
Միայն երկու սերմ կողք-կողքի
Իջան եզրին մի անդունդի:

2.
Եկավ ձմեռ՝ երկար ու ցուրտ,
Ծածկեց ձյունով անտառը մութ:
Եւ քնեցին ձյան ծածկի տակ
Սերմերն անհոգ, տեղերը՝ տաք:

***

Երբ գարնանը ձյունը հալվեց,
Ձնծաղիկը աչքը բացեց,
Ու քչքչաց առուն կայտառ,
Կանաչեցին ծմակ ու ծառ:

***

Սակայն գարնանն այս նորածին
Ոչ բոլորն էին, որ ծլեցին:
Չէ՞ որ անցած տարի քամին,
Որ քշում էր մեր սերմերին,
Կեսին գցեց խոպան հողեր,
Կեսին՝ անշունչ, մռայլ ծերպեր:
Ուստի՝ որը հող էր տեսել,
Արմատ տվել, կյանք էր առել:

Երեւանի թիվ 8 ՀՓՋ-ի ավագ հրշեջ, ավագ սերժանտ Ասատուր Ղալայան

Կյանքի փոխներարկում

2005 թ. մայիսին կայացած Առողջապահության համաշխարհային ասամբլեան որոշեց յուրաքանչյուր տարվա հունիսի 14-ը նշել որպես արյան դոնորների համաշխարհային օր: Հունիսի 14-ին է ծնվել ավստրիացի հայտնի իմունոլոգ Կարլ Լանդշտեյները, որը 1900 թվականին՝ մարդու արյան խմբերը հայտնագործելու համար արժանացել է Նոբելյան մրցանակի:

Այսօր արյան փոխներարկումը բազմաթիվ մարդկանց առողջությանը, կյանքը փրկելուն անհրաժեշտ ու սովորական դարձած գործընթաց է, սակայն տարիներ առաջ դա այդքան էլ հեշտ չէր իրականացնել:

Ամեն ինչ սկսվեց Անգլիայում: 1818 թ. դեկտեմբերի 22-ին կայացած Բժիշկ-վիրաբույժների լոնդոնյան ընկերակցության նիստի ժամանակ անգլիացի բժիշկ Ջեյմս Բլանդելը զեկուցեց արյան առաջին՝ մարդուց մարդուն իրականացված փոխներարկման մասին: Նրա հիվանդին՝ 35-ամյա մի տղամարդու, որը տառապում էր ստամոքսի ինչ-որ հիվանդությամբ, 500 մլ արյուն էին ներարկել մեկ այլ մարդուց: Դրանից հետո նրա վիճակը որոշ չափով լավացել էր, սակայն փոխներարկումից 52 ժամ անց տղամարդը մահացել էր:

Արյան փոխներարկման առաջին սարքի կառուցվածքն ու մեթոդն առաջարկել է նույն բժիշկը՝ Բլանդելը: Այն ժամանակ դեռ չէին կարողանում արյունը կոնսերվացնել եւ փոխներարկումն ուղղակի էր կատարվում՝ մարդուց մարդուն: Անհրաժեշտ էր դա շատ արագ իրականացնել, որպեսզի արյունը չհասցներ լերդանալ: Ռետինն այն ժամանակ դեռ չէին հայտնագործել, եւ սարքի բոլոր դետալները մետաղից էին, ներարկիչն ու խողովակները՝ նույնպես: Արյունը, ինչպես եւ հիմա, վերցնում ու ներարկում էին արմունկի երակից:

Դրանից հետո անցավ եւս տասնչորս տարի՝ նախքան Ռուսաստանում իրականացվեց արյան փոխներարկման առաջին հաջող փորձը: Ռուսները հետեւում էին եվրոպացիների հետազոտություններին: Այդ տարիներին տպագրվող գերմանական ռազմաբժշկական ամսագրում լույս տեսավ ռուս ակադեմիկոս Ստեպան Խոտովիցկու հոդվածը՝ արյան փոխներարկման փորձերի վերաբերյալ: Շուտով նա իր ուսանողներից մեկին՝ մանկաբարձ Անդրեյ Վոլֆին ուղարկեց Լոնդոն՝ Ջ. Բլանդելի մոտ վերապատրաստման:

Վերադառնալով Ռուսաստան՝ Վոլֆն արյան յոթ փոխներարկում իրականացրեց, որից մեկը հաջող անցավ, եւ հիվանդը ողջ մնաց: Դա տեղի ունեցավ 1832 թ. ապրիլի 20-ին՝ Սանկտ Պետերբուրգում: Երիտասարդ մանկաբարձ-գինեկոլոգ Անդրեյ Մարտինովիչ Վոլֆը համոզեց նոր ծննդաբերած կնոջ ամուսնուն դոնոր դառնալ, որպեսզի իրենք կարողանան փրկել նրա կյանքը: Ամուսինն այնքան էլ չէր հավատում բժշկին, սակայն հուսալով՝ համաձայնեց: Փոխներարկումը հաջող անցավ, եւ կինը ողջ մնաց:

Պատմությունը չի պահպանել ոչ այդ կնոջ, ոչ նրա ամուսնու անունը, անհայտ են նաեւ Վոլֆի՝ արյան փոխներարկման ենթարկված մյուս հիվանդների անուններն ու ճակատագրերը: Այս դեպքի մասին մեզ հայտնի է միայն այն բանի շնորհիվ, որ Ա. Վոլֆն իր փորձը նկարագրել էր «Գերմանացի բժիշկների լրատու» ամսագրում լույս ընծայված հոդվածում: Սակայն այդ ժամանակ բժիշկները դեռ ոչինչ չգիտեին արյան խմբերի մասին: Արյան փոխներարկման հաջողությունը մոտ 57 տոկոս էր կազմում: Բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ տարիներին ծննդաբերության ընթացքում արյան կորուստը հավասարազոր էր մահվան դատավճռի, իսկ կեսարյան հատում եւ ուլտրաձայնային հետազոտություն դեռեւս չէին անում, սա բավական լուրջ ցուցանիշ էր:

Ի պատասխան ռազմաբժշկական ամսագրում ակադեմիկոս Իլյա Բույալսկու հայտարարությանը, թե Ռուսաստանում արյան փոխներարկում չի իրականացվում, Վոլֆն իրեն թույլ է տալիս հղում անել իր հաջողված փորձին: Սակայն հասարակ մանկաբարձ-գինեկոլոգին հարիր չէր հակաճառել ակադեմիկոսին, եւ դա նրան զգալ են տալիս: Ամսագրի հաջորդ համարում՝ վիրավորված ակադեմիկոսները խիստ քննադատության են ենթարկում ու բառացիորեն ցաքուցրիվ անում Վոլֆի՝ կենդանիներից մարդուն արյան փոխներարկման սխալ լինելու, բաց ներարկիչներ չօգտագործելու (որոնց կիրառման դեպքում արյունը շփվում էր օդի հետ) եւ ներարկումից առաջ խողովակները ջրով չլցնելու հրահանգները: Հետագայում կյանքն ապացուցեց համեստ մանկաբարձի իրավացիությունը, սակայն նրա անունն արդեն մոռացվել էր:

Գոհար Բաղդասարյան

Դիմավորում են ըստ հագուստի, ճանապարհում ...

Սկզբում հագուստի հիմնական նշանակությունը մարդուն եղանակի անբարենպաստ դրսեւորումներից պաշտպանելն է եղել: Այսօր այն արդեն երկրորդ մաշկի պես է դարձել: Հագուստի միջոցով ոչ միայն հնարավոր է պարզել մարդու մոդայիկ կամ ճաշակով լինելը, այլեւ՝ թե նա ինչ տրամադրություն, ցանկություններ ու մտադրություններ ունի: Այդ ամենն արտահայտվում է ոչ միայն հագուստի ոճի ու ձեւի, այլեւ դրա գույնի ընտրությամբ, զարդերի առկայությամբ կամ բացակայությամբ եւ շատ այլ առանձնահատկություններով:

Լինում են այնպիսի օրեր, երբ կանգնում ես հագուստով լեփ-լեցուն պահարանի առջեւ, ու պարզում ես, որ դու ոչինչ չունես հագնելու: Որտեղից է այս զգացողությունը՝ իսկապե՞ս հագնելու ոչինչ չկա, թե՞ պարզապես հոգեկան աշխարհն է ըմբոստանում: Նման իրավիճակում հայտնվելիս փորձեք հասկանալ, թե ինչը ձեզ չի գոհացնում՝ ձեր տե՞սքը, դժվարանու՞մ եք ընտրություն կատարել, թե՞ ձեզ համար կարեւոր է շրջապատի կարծիքը:

Հագուստը ինֆորմացիա է պարունակում մեր անձի մասին: Մեզանից յուրաքանչյուրն «հանդիպում է» այնպիսի օրերի, երբ ուզում է փոխվել, այլ մարդ դառնալ, քանի որ ժամանակ առ ժամանակ մարդ «հոգնում է ինքն իրենից», նոր զգացողությունների կարիք է ունենում: Հենց այդ ժամանակ, երբ անհարմարություն ենք զգում մեր կերպարում, դժգոհություն է առաջանում առօրյա հագուստի նկատմամբ, որում մենք մեզ շատ հարմարավետ էինք զգում որոշ ժամանակ առաջ:

Շատ հաճախ մարդիկ սկսում են կրկնօրինակել եւ համեմատվել նրանց հետ, ովքեր հաջողակ են եւ շատ բանի են հասել իրենց կյանքում: Հագնվելով նրանց նման՝ մենք մեզ վերագրում են այնպիսի որակներ, որոնք մենք չունենք, բացակայում են եւ որոնց կարիքն զգում ենք: Շատերի մեջ սեփական անհատականության փնտրտուքն արտահայտվում է սեփական ոճը գտնելու փորձերում: Ոմանք փորձում են իրենց տարբեր ոճերում, իսկ ոմանք էլ մնում են հավատարիմ իրենց միակ ոճին: Շատերը կարողանում են հեշտությամբ զգալ իրենց ներքին վիճակը եւ այնպիսի հագուստ ընտրել, որը լրիվ համապատասխանում է ներաշխարհին, որի մեջ էլ շատ ազատ ու հարմարավետ են զգում:

Տարբեր ոճերի հագուստ փորձարկելը հնարավորություն է տալիս մարդուն դուրս բերել շատ թաքնված, ներքին դրսեւորումներ: Հավանաբար, բոլորն էլ նկատած կլինեն, որ հագուստը թելադրում է մարդու քայլվածքը, շարժուձեւը, խոսքը, տրամադրվածությունը: Օրինակ՝ երբ կինը շրջազգեստ է հագնում, նա այլ կերպ է ներկայանում, քան՝ երբ սպորտային հագուստով է: Այս ամենի գաղտնիքն այն է, որ մարդու մեջ թաքնված են շատ կերպարներ, եւ դրանք կենդանանում են՝ համապատասխան հագուստով պայմանավորված:

Մի՛ վախեցեք ձեզ նման լինելուց եւ ձեր էությանը համապատասխան հագնվելուց, քանի որ ներքին ներդաշնակությունը եւ հավասարակշռվածությունը՝ սեփական անձին հավատարիմ մնալն է:

Հագուստը մարդու ինքնարտահայտման կարեւոր գործոն է, սակայն պետք չէ այն դարձնել պաշտամունքի առարկա եւ ապրել միայն հագնվելու համար:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

Շրջակա միջավայրի պաշտպանության օրը «Բրիթիշ Պետրոլիումին» վերջապես հաջողվեց պաշտպանիչ գմբեթ դնել Մեքսիկական ծոցի հատակում եւ սկսել նավթի դուրսմղումը ջրի մակերեւույթ: Ընկերությունը վստահեցնում է, որ այժմ նավթի արտահոսքի ծավալները չեն գերազանցի սկզբնական մակարդակի 10%-ը:

Այնուամենայնիվ, Մեքսիկական ծոցը լցված 39 գալոն նավթն արդեն անուղղելի վնաս է հասցրել շրջակա միջավայրին:

Մարս 500. մեկնարկը տրված է

Մի քանի օր առաջ վեց մարդ Մոսկվայում փակվեց արհեստական տիեզերանավի մեջ, որտեղ 520 օր կանցկացնի՝ ստուգելու համար, թե ինչպես է մարդը դիմանում սթրեսներին՝ Մարսից վերադառնալու ճանապարհին:

250 օր անց արհեստական տիեզերական միջավայրում «ծրարված» մնալուց հետո, Մարս 500 -ի անձնակազմի անդամները կհագնեն աստղագնացի իրենց հագուստներն ու կմտնեն ավազահանքը:

Այս մարդիկ ընտրվել են հազարավոր բարձր որակավորում ունեցող հայցվորներից, նրանց առաքելությունն է խաղարկային ճամփորդություն իրականացնել դեպի Մարս մոլորակ: Պայմանական ճամփորդությունը կտեւի 520 օր, որը մասնակիցները կանցկացնեն Մոսկվայի այգիներից մեկում կառուցված արհեստական տիեզերանավում:

Տիեզերքի եվրոպական գործակալության՝ «Մարս 500» կոչվող այս փորձարկման նպատակն է պարզել, թե ինչպես է մարդը հաղթահարում սթրեսը, շարժումների եւ շրջապատի սահմանափակումները: Այդպիսի բարդ պայմաններ են սպասում Արեգակնային համակարգն ուսումնասիրող ապագա աստղագնացներին:

Ենթադրյալ աստղագնացներին անընդհատ զգոն պահելու համար սարքավորումների խափանումներ ու բժշկական արտակարգ իրավիճակներ են խաղարկվելու: Կանոնավոր բժշկական ստուգումներն ու հոգեբանական թեսթերը պետք է պարզեն, թե որքան վատ կամ որքան լավ է մարդը հաղթահարում այդ դժվարությունները:

Անձնակազմը՝ երեք ռուս, երկու եվրոպացի եւ մեկ չինացի, 18 ամսվա իրենց «ճամփորդության» մեծ մասն անցկացնելու են ավտոբուսի չափ մի տարածքում, որտեղ վեց առանձին ննջարան է կահավորված: Եվս մի կապսուլայում, որը կցված է հիմնական հատվածին, լինելու է փոքր մարզասրահ, ահեստական ջերմոց եւ պահեստ՝ ջրի ու սննդի համար: Երրորդ կապսուլան բժշկական սենյակն է:

Ընտրվելով որպես անձնակազմի անդամ՝ կիսով չափ իտալացի, կիսով՝ կոլումբիացի 27-ամյա ինժեներ Դիեգո Ուրբինան թեեւ ուրախացել էր, բայց. «մի փոքր անհանգստացած էր, թե ինչ անսպասելի խոչընդոտներ կարող են առաջ գալ մեկուսացված պայմաններում, հիմնականում՝ հոգեբանական»: Անձնակազմի մեկ այլ անդամ՝ ռուս տիեզերագնաց Ալեքսեյ Սիտովը, այս տարի ամուսնացել է, եւ «շատ դժվար» է համարում ամուսնական առաջին մեկ ու կես տարին կնոջից հեռու լինելը:

Սիմոնետա դի Պիպոն՝ Տիեզերքի եվրոպական գործակալության՝ մարդկանց մասնակցությամբ թռիչքների ղեկավարը, ասում է, որ այդ մարդիկ բավական քաջ են, որ համաձայնել են մասնակցել «պատմական» այս փորձին: Մարդկությունը դեռ երախտագետ կլինի նրանց՝ իրենց կյանքից այդքան ժամանակ գիտությանը նվիրելու համար:

Անձնակազմը 250 օր կանցկացնի թռիչքում, որից հետո վայրէջք կկատարի Մարս մոլորակի մակերեսին առավելագույնս նմանեցված տարածքում: 30 օր այդտեղ աշխատելուց հետո՝ մասնավորապես ընդարձակ ավազահանքում, անձնակազմը կսկսի իր 240-օրանոց «վերադարձը»:

Միակ շփումը, որ մարդիկ ունենալու են արտաքին աշխարհի հետ, ռադիոկապն է տիեզերական գործակալության «Երկրի անձնակազմի» հետ: Ճամփորդությունն իրականին առավել մոտ դարձնելու համար «Երկիր-Մարս» խոսակցությունների ժամանակ ձայնային ալիքները 20 րոպե ուշացումով տեղ կհասնեն:

Սան Ֆրանցիսկոյի Կալիֆորնիայի համալսարանի հոգեբան Նիկ Կանասը, որն ուսումնասիրել է տիեզերագնացներին միջազգային տիեզերակայաններում, ասում է, որ անձնակազմին դժվար ժամանակներ են սպասում:

«Շատ է եղել, որ մարդիկ մեկուսացած ու առանձնացած են մնացել երկար ժամանակ, բայց դա շատ ճնշող է: Դու հոգնում ես՝ լսելով նույն պատմությունները: Հետաքրքիր թեմաները մի քանի ամսում սպառվում են: Նրանք պետք է անընդհատ խոսելու բան գտնեն, որ չձանձրանան», ասում է նա:

Տիեզերական գործակալությունները նախկինում էլ են երկար ճամփորդություններ խաղարկել, բայց դրանք միշտ չէ, որ հաջողությամբ են ավարտվել: Նույն Մոսկվայում 1999թ. փորձը քաոսի է վերածվել, երբ ռուս կապիտանը փորձել է ուժով համբուրել կանադացի գործընկերուհուն, իսկ անձնակազմի մյուս երկու ռուս անդամները հարբել ու կռիվ են սարքել, որից հետո պատերին ցայտած արյուն է մնացել:

«Մարդիկ տիեզերքում նույն բաներն են անում, ինչ որ Երկրի վրա», ասում է պրոֆեսոր Կանասը. «Նրանք ավելի լավ են տանում սթրեսը, բայց այնտեղ սթրեսն ավելի շատ է»:

Հրաբխագիտություն. ժայթքումների շնորհիվ

Իսլանդիայի հրաբխի ժայթքումը գիտնականներին տվեց այնպիսի հնարավորություն, որ կյանքում մի անգամ է պատահում:

Ապրիլի 14-ի երեկոյան Գելսոմինա Պապալարդոն շտապ հաղորդագրություն ուղարկեց ամբողջ Եվրոպայի իր գործընկերներին՝ խնդրելով նրանց միացնել իրենց լազերներն ու դրանք դեպի երկինք ուղղել: Էյաֆյատլայոկուդլ հրաբուխը հենց նոր ժայթքել էր, իսկ անսովոր քամին հրաբխային ամպն ուղարկում էր դեպի Եվրոպայի խիտ երթեւեկությամբ պատված օդային տարածքը: Պապալարդոն, որն աշխատում է Իտալիայի Պոտենզա քաղաքի Շրջակա միջավայրի վերլուծության մեթոդոլոգիաների ինստիտուտում, ցանկանում էր լազերային լոկատորներ (LIDAR) օգտագործել հրաբխային փոշին չափելու համար, քանի որ այն տարածվում էր մայրցամաքով մեկ: Սա եզակի հնարավորություն էր նաեւ լազերային սարքավորումների ցանցի աշխատանքը ստուգելու համար:

Պապալարդոն, որը կարգավորում է Եվրոպական աերոզոլային հետազոտությունների լազերային ցանցը (EARLINET), «բարձր պատրաստականության» մեջ գտնվող միակ գիտնականը չէր: Քանի դեռ էյաֆյատլայոկուդլն աղտոտում էր երկինքը, տասնյակ գիտնականներ ամբողջ Եվրոպայում իրենց ուշադրությունը սեւեռեցին դեպի վեր՝ երկինք, տվյալներ հավաքելու համար: Մթնոլորտի մասնագետները, հեռահար հետազոտությունների գիտակները, օդի փորձանմուշների փորձագետները, երկրաբաններ եւ հաբխագետներ, օգտվեցին այդ հազվագյուտ հնարավորությունից՝ հրաբուխ ուսումնասիրել սեփական բակում:

Իսլանդացի գիտնականները

Մինչ Իսլանդիայում գիտնականները հետազոտում էին հրաբխի ժայթքումը հենց խառնարանում, ավելի հեռվում աշխատող մասնագետները փորձում էին գնահատել փոշու ամպի հետագա զարգացումները: Բոլորը հույս ունեին բավարարելու իրենց սեփական գիտական հետաքրքրությունն այս հազվագյուտ ու տպավորիչ երեւույթի նկատմամբ, սակայն նրանք նախեւառաջ պետք է պատասխանեին կառավարություններին եւ քաղաքացիական ավիացիայի ղեկավարությանը, որոնք ժամ առաջ տվյալներ էին պահանջում ժայթքման վերաբերյալ՝ կանխատեսումներ անելու համար: Դա նշանակում էր մոռանալ աշխատանքի ընդունված եղանակների մասին: Ժայթքման պահից աշխատելով գործնականում առանց դադարների, հետազոտողներն շտապ տվյալներ էին հավաքում ու տարածում՝ առանց սպասելու, մինչեւ որ դրանք վերջնականապես պատրաստ լինեն հրապարակման:

«Շատ դժվար է»՝ ասում է Պապալարդոն, որը հույսը դրել էր իր թիմի բարի կամքի վրա, քանի որ նրանք լրացուցիչ աշխատում էին առանց հավելավճարի՝ կառավարության պահանջները բավարարելու համար: «Ապրիլի 15-ից ես օրական երեք ժամ եմ քնել, առավելագույնը»:

Պապալարդոն խնդրի առաջ էր կանգնած. նրա տվյալները բարձր էին գնահատվում ավիացիայի ղեկավարության եւ մթնոլորտի գիտակների կողմից, որոնք դրանք պահանջում էին անհապաղ: Բայց չափումներն օգտակար չեն կարող լինել, քանի դեռ դրանք չեն վերլուծվել: Իսկ դա ժամանակ է պահանջում: Տվյալները սովորաբար օգտագործվում են ամպերի, Սահարայի փոշու եւ կլիմայի վրա ազդեցություն ունեցող՝ մթնոլորտային այլ բաղադրիչների երկարաժամկետ ուսումնասիրություններից հետո:

«Սա հասարակ գործ չէ», ասում է նա: Պապալարդոն ուզում էր վստահ լինել, որ ուրիշներին տրվող իր տեղեկատվությունը ճշգրիտ է, եւ՝ որ կանխատեսումներ արվում են ճիշտ տվյալների հիման վրա: Այդ պատճառով էլ նա մնում էր մինչեւ ուշ գիշեր, հավաքում եւ վերլուծում Եվրոպայի տարածքում տեղադրված լազերային 26 լոկատորներից ստացվող տվյալները, եւ միայն դրանից հետո արդյունքները տրամադրում ավիացիայի պատասխանատուներին:

Նա ասում է, որ կցանկանար, որպեսզի կառավարություններն ապագայում աջակցեին շուրջօրյա մոնիտորինգի եւ գնահատման ավտոմատացված համակարգերի ենթակառուցվածքներին: Նման տվյալների հասանելիությունը կօգնի մթնոլորտն ուսումնասիրող մասնագետներին՝ բարելավելու հրաբխային փոշու խտության վերաբերյալ կանխատեսումների իրենց մոտեցումները:

Իսլանդացի գիտնականներն իրադարձությունների կենտրոնում էին ու ամենազբաղվածն էին: Նրանց համար էյաֆյատլայոկուդլն ավելին էր, քան օդային երթեւեկությունը խոչընդոտող անհարմարություն: «Ես մոտիկից ուսումնասիրել եմ այս հրաբուխը 18 տարի», ասում է Ֆրեյշտեյն Սիգմունդսոնը, Ռեյկյավիկի երկրաբանական գիտությունների ինստիտուտի հրաբխագետներից մեկը, որին հետաքրքրում է, թե ինչպես է ձեւախեղվում երկրակեղեւը սեյսմիկ իրադարձությունների ժամանակ:

Հրաբուխը սեյսմիկ ակտիվություն է ցուցաբերել այն ամբողջ ժամանակ, ինչ Սիգմունդսոնը հետեւել է դրան: Բայց այդ ակտիվությունը սաստկացավ 2009թ. դեկտեմբերին, եւ ծայրակետին հասավ մարտի 20-ին, երբ հրաբխային լավան դուրս ժայթքեց հրաբխի կողքից: Սեյսմիկ ակտիվության նման դրսեւորումն ստիպեց ղեկավարներին տարհանել հրաբխի անմիջական հարեւանությամբ բնակվող մարդկանց՝ մինչեւ ապրիլի 14-ի հզոր ժայթքումը:

Այս մեկը նման էր նույն հրաբխի նախորդ՝ 1821 թ. ժայթքմանը, որը պարբերաբար ակտիվանում ու հանգստանում էր մի ամբողջ տարի: Չնայած 19-րդ դարի օրինակը հիմք էր տալիս կարծելու, թե այս ակտիվությունն էլ երկար կտեւի, սակայն էյաֆյատլայոկուդլի մագմայի արտանետումները շատ ավելի բարդ էին, ասում է Սիգմունդսոնը, կանխատեսումներ անելն՝ էլ ավելի բարդ: «Ոչ մի կերպ հնարավոր չէ իմանալ, թե դա ինչքան կտեւի», ասում է նա:

Հրաբխի ժայթքումն ու դրա պատճառով Եվրոպայում առաջացած ճգնաժամը նորովի միավորեց հետազոտողներին: Էդինբուրգի համալսարանից հրաբխագետ Թոր Թորդարսոնը, որն Իսլանդիայում էր ժայթքման պահին, ասում է. քանի որ հրաբխային փոշին տարածվեց Եվրոպայի ամբողջ հյուսիսային հատվածքում, դա առաձնահատուկ հնարավորություն տվեց վերականգնելու ժայթքմանը նախորդող իրադարձությունների շղթան եւ հասկանալու, թե ինչ է պատահել հրաբխի ներսում:

«The Nature» ամսագիր

արտակարգ ժամանց

Իրական ու անհավատալի

Երկու սխալ

Գերմանիայում մի պատանի, չգիտես ինչու, դիսկոտեկ է գալիս հրազենով: Արդարացիորեն ենթադրելով, որ ձեռքին զենք տեսնելով՝ իրեն դիսկոտեկ չեն թողնի, տղան որոշում է այն թաքցնել տաբատի փողքի մեջ: Հենց այստեղ էլ նա գործում է երկրորդ ճակատագրական սխալը: Երիտասարդն անզգուշաբար դիպչում է ձգանին եւ...

Կրակոցից հետո դեպքի վայր ժամանած շտապօգնության բժիշկները նրան դուրս են գրում ազգի գենոֆոնդից, քանի որ նա այլեւս չէր կարող ժառանգներ ունենալ:

Բարեխիղճ վաճառականը

Պաղեստինում դարբնի մոտ մի վաճառական է գալիս: Նա մի կշռաքար է բերում եւ խնդրում, որ դարբինը դրա վրա մի փոքր էլ երկաթ ավելացնի, որպեսզի նա կարողանա իր ապրանքն ավելի ճիշտ կշռել: Դարբինն, իհարկե, համաձայնում է կատարել նրա խնդրանքը, սակայն չի հասցնում... Կշռաքարը պայթում է: Պարզվում է, որ դա ոչ թե կշռաքար էր, այլ նռնակ: Պայթյունի հետեւանքով բարեխիղճ վաճառականը մահանում է, իսկ դարբինը՝ ծանր վնասվածքներ ստանում:

Ռոբին Հուդ 2

Երկու ընկեր, ալկոհոլի պատկառելի քանակությամբ տրամադրությունները բարձրացնելուց հետո որոշում են մի քիչ զվարճանալ: Նրանցից մեկն առաջարկում է «Ռուբին Հուդ» խաղալ: Այսինքն՝ կրակել մեկուկես գլխին դրված գարեջրի թիթեղյա բանկաների վրա: Պետք էր, չէ՞, ինչ-որ տեղ իրացնել նաեւ գարեջրի դատարկ բանկաները:

Այդ «անմեղ» զվարճության հետեւանքով ընկերներից մեկի արձակած փամփուշտը դիպչում է մյուսի դեմքին եւ լուրջ վնասվածք պատճառում:

Անհամբերը

Փողոցով ընթացող ավտոմեքենան վրաերթի է ենթարկում... գլխին ջրասուզակի սաղավարտ ունեցող մի երիտասարդ տղամարդու: Թե ի՞նչ գործ ուներ նա փողոցում, ոստիկանները պարզում են միայն մոտակա խանութի գաղտնի տեսախցիկների տեսագրությունները դիտելուց հետո...

Քսանչորսամյա Սայմոն Ֆլիսը

գողություն էր ծրագրել ջրասուզակային հանդերձանք վաճառող մասնագիտացված խանութում: Նա հաջողությամբ թափանցում է խանութ ու, տեսնելով ցուցափեղկին դրված ստորջրյա սաղավարտը, որոշում փորձել այն: Սաղավարտը հագնելուց հետո Սայմոնը հասկանում է, որ այլեւս չի կարողանում ինքնուրույն հանել այն: Մի քանի րոպե ապարդյուն չարչարվելուց հետո նա լսում է խանութին մոտեցող ոստիկանական մեքենաների ազդանշաններն ու որոշում այդպես էլ փախչել: Սաղավարտը գլխին դուրս վազելով փողոց՝ Սայմոնը չի նկատում բարձր արագությամբ իր կողմը սլացող ավտոմեքենան եւ վայրկյաններ անց հայտնվում դրա անիվների տակ:

Միշտ միասին

Յոթանասունյոթամյա Բոբ Հերշլերը ծխամորճի մեծ սիրահար էր ու համարյա երբեք չէր բաժանվում իր սիրելի ծխամորճից: Սակայն մի օր Բոբը ծանր այրվածքներ է ստանում... վառվող ծխամորճը վերնաշապիկի գրպանում թողնելու պատճառով:

Նիկոտինի հերթական մեծ բաժինը թոքերն ուղարկելուց հետո՝ նա հանգցնում է ծխամորճն ու դնում գրպանը: Բայց կրակը ծխամորճի մեջ ամբողջությամբ չէր մարել: Կարճ ժամանակ անց բռնկվում է նույն գրպանում գտնվող լուցկու տուփը, իսկ հաջորդ ակնթարթին նաեւ՝ Բոբի վերնաշապիկն ու մնացած հագուստը:

Դեպքի վայր հասած հրշեջները մարում են կրակը, սակայն ծխամորճի սիրահարը ծանր այրվածքներ է ստանում:

Սառած հավերը

Բրիտանական երկաթուղին իր նոր՝ ավելի քան 150 մղոն/ժամ արագություն ունեցող գնացքի անվտանգությունը ստուգելու համար ավիացիայից մի հատուկ թնդանոթ է խնդրում: Դրա օգնությամբ երկաթուղայինները ցանկանում էին ստուգել գնացքի մեքենավարի խցիկի դիմապակու ամրությունը:

Ինչպես հայտնի է՝ ավիացիայի հիմնական խնդիրներից մեկը թռչուններն են, որոնք թռիչքի կամ վայրէջքի ժամանակ կարող են հայտնվել օդանավի շարժիչային հատվածում ու վթարային իրավիճակ ստեղծել՝ վտանգելով անձնակազմի եւ ուղեւորների կյանքը: Ճիշտ է՝ շատ դեպքերում ինքնաթիռների արձակած բարձր աղմուկը վախեցնում է փետրավորներին, սակայն անվախ թռչուններից ու դժբախտ դեպքերից ոչ ոք ապահովագրված չէ: Նման դեպքերում օդանավերի շարժիչների աշխատանքը ստուգելու համար բրիտանացի մասնագետները ստեղծել են հատուկ «հավերով կրակող թնդանոթ», որը եւ տրամադրել էին երկաթուղայիններին:

Սակայն որքան մեծ էր վերջիններիս զարմանքը, երբ թնդանոթից դուրս թռչող հավերը ոչ միայն կոտրում են գնացքի դիմապակին, այլեւ՝ այն կոտրել-անցնելով՝ ծակում են նաեւ մեքենավարի նստատեղի թիկնակը:

Երկաթուղու աշխատակիցները ավիացիայի մասնագետների օգնությամբ անցկացված լայնամասշտաբ ու մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո եզրակացնում են. «Թնդանոթը պետք է «լիցքավորել» ոչ թե սառեցրած, այլ՝ այնպիսի հավերով, որոնց վրայի սառույցն արդեն հալչել է»:

Ատրճանակների հավաքածու

Կինը ննջարանի հատակին մի ատրճանակ է գտնում ու որոշելով, որ դա իր ամուսնու հավաքածուից է, տանում է նրա մոտ: Իմիջիայլոց՝ այդ հավաքածուն հարյուրից ավելի նմուշ ուներ:

Ամուսինը, ցանկանալով կնոջն ապացուցել, որ ատրճանակը լիցքավորված չէ ու միանգամայն անվտանգ է, փողը դնում է քունքին եւ սեղմում ձգանը... Նա սխալվում էր:



§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦
ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ »ô Ññ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ·³ÉÇù¦
Éñ³ïí³Ï³Ý Ï»ÝïñáÝ êà À

îÝûñ»Ý`
ÜáõÝ» ¶ñÇ·áñÙ³Ý
¶ÉËë³íáñ ËÙµ³·Çñ`
ÜÇÏáÉ³Ù ¶ñÇ·áñÙ³Ý

ÊÙµ³·ñÇ ï»Õ³Ï³É`
²í³. º÷ñ»ÙÙ³Ý
Ò»ô³íáñáÕ`
Ì³ñ¹³Ý ¶³ëå³ñÙ³Ý

ºñ»ô³Ý, äáõßÏÇÝÇ 25
Ð»é. 56 76 56, 24 24 22
E - mail: tert@emergency.am

îåª·ñí³Í ¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏáõÃÙ³Ý
ïå³ñ³ÝáõÙ` ²ñß³ÏáõÝÙ³ó 2
Ì³í³ÉÁ` 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ
ä³ïí»ñ`435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³ÙÏ³Ý`1074,
ïå³Ù³Ý³ÏÁ`4870 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության
10.6.2010 թ.